

«ՇԻՐԱԿԻ Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ N 1/2

2021 թվականի դեկտեմբերի 25-ի 01 ի նիստի

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ (հաստատված ՇՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի 2018թ. օգոստոսի 30-ի նիստում, փոփոխված և հաստատված ՇՊՀ-ի հոգաբարձուների խորհրդի 2019թ. մարտի 19-ի նիստում) ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N 1031-Ն որոշմամբ հաստատված «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 26-րդ կետը, 41-րդ կետի 2-ին ենթակետը և 56-րդ կետը՝ «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Կանոնակարգի 2.4 կետի դ) ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «ինքնակեսագրական, որը պետք է պարունակի հավակնորդի ուսման, աշխատանքային, գիտակրթական գործունեության փորձի նկարագիրը»:
2. Կանոնակարգի 2.4 կետի գ) ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «ակադեմիական և գիտական գործունեության առնվազն 5 տարվա ստաժը հավաստող փաստաթուղթ»:
3. Կանոնակարգի 5.3 կետում «4» թիվը փոխարինել «5» թվով:
4. Կանոնակարգի 3.2 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «ՇՊՀ ռեկտորի պաշտոնում կարող է ընտրվել այն անձը, որն ունի գիտական աստիճան և առնվազն հինգ տարվա ակադեմիական և գիտական գործունեության ստաժ»:
5. Կանոնակարգի Հավելված 2.1-ում և Հավելված 2.2-ում «Խորհրդի 24 անդամներից ներկա էին __-ը» տողերում «24» թիվը փոխարինել «20» թվով:
6. Կանոնակարգի Հավելված 2.2-ի աղյուսակի մեջ ավելացնել «Անվավեր քվեաթերթիկների քանակ» տողը:

Հոգաբարձուների խորհրդի
Նախագահ՝

Լևոն Բարսեղյան